«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-215-03.07.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածի 4-րդ մասի՝ նոտարները, անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղված անձինք, ինչպես նաև վարձու աշխատողները, որպես ինքնազբաղված անձինք, ստացման ենթակա եկամուտներից ինքնուրույն հաշվարկում և փոխանցում են սոցիալական վճարները՝ տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում:

Օրենքի նախագծով նախատեսվում է փոփոխություն կատարել նշված մասում և սահմանել, որ «Նոտարները, անհատ ձեռնարկատերերն ստացման ենթակա եկամուտներից ինքնուրույն հաշվարկում և փոխանցում են սոցիալական վճարները տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով շահութահարկի վճարման համար սահմանված ժամկետներում, իսկ ինքնազբաղված անձինք, ինչպես նաև վարձու աշխատողները, որպես ինքնազբաղված անձինք՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում:»:

Նշված փոփոխության վերաբերյալ հայտնում ենք, որ ինչպես անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից շահութահարկի, այնպես էլ՝ ինքնազբաղված անձանց կողմից եկամտային հարկի տարեկան վճարման ժամկետը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ: Այսինքն՝ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով անհատ ձեռնարկատերերի, նոտարների և ինքնազբաղված անձանց համար ընդամենը սահմանված է սոցիալական վճարների վճարման տարեկան ժամկետ՝ մինչև

յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

Հաշվի առնելով շարադրվածը՝ հայտնում ենք, որ անհատ ձեռնարկատերերի և նոտարների՝ շահութահարկ վճարող հանդիսանալու հետ կապված օրենքի՝ փոփոխություն նախատեսող հոդվածի և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի նորմերի միջև հակասություն առկա չէ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկա փուլում ձեռնպահ մնալ օրենքի նախագծի քննարկումից և օրենքի նախագծով առաջարկվող տեխնիկական բնույթի փոփոխությանն անդրադառնալ առաջիկայում սպասվող օրենսդրական փոփոխությունների շրջանակում: